

ԽԱՐԲԵՐԴԻ ԵՎ ԵՐՁՆԿԱՅԻ ԲԱՐՐԱՌՆԵՐԻ ՓՈԽԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ. Մ. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Հայ բարբառագիտության մեջ ընդունված է հարբերդի և Երզնկայի բարբառները դիտել որպես միևնույն՝ հարբերդ-Երզնկայի բարբառի խոսվածքներ: Այդ կարծիքը, որ առաջին անգամ արտահայտել է մեծանուն լեզվաբան Հ. Աճառյանը¹, հետագա բարբառագիտական աշխատություններում որդեգրվել է նույնությամբ²: Պրոֆ. Գ. Զահուկյանի բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգմամբ ևս հարբերդի և Երզնկայի բարբառների փոխհարաբերության հարցը մնում է անփոփոխ³:

Միայն Գուրգեն Տեր-Վարդանյանն է, որ իր «Երզնկա-Կամախ գավառաբարբառը և ազգագրական հուշեր» աշխատության մեջ տալով Երզնկայի բարբառի համառոտ նկարագիրը և նշելով Երզնկայի ու հարբերդի բարբառների մի քանի տարբերակիչ հատկանիշներ, դրանք համարում է առանձին բարբառներ⁴: Սակայն հիշյալ աշխատության մեջ այդ կատարվում է առանց «բարբառ» և «խոսվածք» հասկացությունների գիտական որոշակի տարբերակման, այլև՝ առանց նրանց սահմանները որոշող որևէ ընդունված չափանիշի հաշվառման:

Ստորև ներկայացվում է հարբերդի և Երզնկայի բարբառների համեմատական ուսումնասիրությունը՝ պրոֆ. Գ. Զահուկյանի կողմից մշակված 100 տարբերակիչ հատկանիշների և ըստ Սվոդեշի 100 բառանոց ցուցակի: Միաժամանակ հաշվի են առնված այնպիսի բարբառային հատկանիշներ⁵, որոնք էական են այդ երկու բարբառները իրարից հստակորեն զատորոշելու համար: Վերջիններս ցույց են տրված * նշանով: Մեր ուսումնասիրության համար հիմք է ծառայել Սովետական Հայաստանում բնակություն հաստատած տուրեց խարբերդցիների և երզնկացիների կենդանի խոսքը:

Ինչպես Երզնկայի, այնպես էլ հարբերդի բարբառների հնչույթային մակարդակներում բացի հայերենի ա, ի, ու, օ, է, ը (բոլորն էլ հանդես են գալիս հնչույթային արժեքով) ձայնավորներից, իմաստակիր միավոր է նաև առաջին շարքի ստորին դիրքի ա ձայնավորը: Դա ապացուցվում է նվազագույն հակադրության հետևյալ զույգերով.

1 Տե՛ս Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա—Նոր Նախիջևան, 1911: Նույնի՝ Հայոց լեզվի պատմություն, գիրք 2-րդ, Երևան, 1951:

2 Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953: Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Երևան, 1957: Ռ. Բաղրամյան, Դերսիմի բարբառային բարտեզը, Երևան, 1960, և ուրիշներ:

3 Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:

4 Գ. Տեր-Վարդանյան, Երզնկա—Կամախ գավառաբարբառը և ազգագրական հուշեր, Երուսաղեմ, 1968:

5 «Բարբառային հատկանիշ» հասկացությունը այստեղ գործածվում է պրոֆ. Զահուկյանի կողմից կիրառած իմաստով, իբրև «տվյալ բարբառային միավորների՝ իրարից ունեցած ամեն կարգի տարբերություններ» (նշվ. աշխ., էջ 44):

Երզնկա՝ րառ (հավի թառ) — րառ (բրդի թել)
 շախ (փայտի շորացած կտոր) — շախ (հանդիմանություն) — թրք.
 նազիկ (նազուն, նաև հատուկ անուն) — նազիկ (ձախարակի մաս)
 համ (համ) — համ (և՛) — թրք.
 քար (քար) — քար (շահ) — թրք.

Խարբերդ՝ լան (լալ բայի ըղծ. հոգն., 3-րդ դ.) — լան (լայն)
 կալ (դալ բայը) — կալ (դալ)
 սալ (սալ քար) — սալ (սալ)
 վար (վար ու ցանք) — վար (վար)
 լար (լար) — լար (լեռ)
 քարի (քար բառի սեռականը) — քարի (քեռի)
 ձար (ծառ) — ձար (ծայր)
 քար (ձեռքի, ոտքի թաթ) — քար (թլվատ)

Այս օրինակներից երևում է, որ երզնկայի բարբառում ա-ն հակադրու-
 թյան առնվազն մեկ եզրը փոխառյալ բառ է, իսկ Խարբերդում ա-ն հակա-
 դրություն, փոխառյալ բառերից շատ, ստեղծվում է հայերեն բառերում: Սա
 բացատրվում է նրանով, որ երզնկայում ա կա հիմնականում փոխառյալ և
 ընդամենը մի քանի հայերեն բառերում՝ աղէր (եղի), առաշ, առնիկ, աժան,
 ամմէն, զաբգէլ, նախ, ամս, վանէլ: Մինչդեռ Խարբերդի բարբառը երզնկայի
 նկատմամբ ունի ա-ի անհամեմատ մեծ հաճախականություն: Բացի փոխառ-
 յալ բառերից և երզնկայի բարբառի հիշյալ օրինակներից, Խարբերդի բար-
 բառում ա կա հայերենի ալ-ի դիմաց՝ հար, սար, ար, ծար, ծար, ախպար, ալ (հայր,
 մայր, լայն, ձայն, եղբայր, այս), ու-ից առաջ և-ի դիմաց՝ ֆարի, ֆար, ֆար,
 մարնէլ, հարու (քեռի, լեռ, բեռ, մեռնել, հեռու), ինչպես նաև բազմաթիվ բա-
 սերում, որոնցում ա-ի զրսևորումը հնարավոր չէ բացատրել որևէ միասնա-
 կան օրինաչափությամբ՝ ալիւ, հարիւ, արիւ, վարժ, հալիլ, կարիլ,
 զարիւ, ձարիլ, խանձիլ, զարիլ (ալյուր, հարյուր, արյուն, վարժ, հալել,
 կարիլ, ծոթիւն, ծալել, խանձել, զատել): Օժանդակ բայի եզակի թվի 3-րդ
 դեմքում է-ի փոխարեն երկու բարբառներում էլ առկա է ա:

Ա-ի զրսևորման ոլորտները, ինչպես նաև նրա տարբեր հաճախականու-
 թյունները Խարբերդի և երզնկայի բարբառների միջև դժուար է հետևյալ տար-
 բերությունը.

*1. ա-ի դոյությունը Խարբերդի բարբառի հնչյութային մակարդակում
 հանդիսանում է ներքին դարգացման, իսկ երզնկայի բարբառի համակար-
 գում՝ օտար լեզուների (թուրքերեն, պարսկերեն, արաբերեն) և հարևան բար-
 բառների, այլ կերպ ասած՝ արտաքին ազդեցության արդյունք⁶: Միաժամա-
 նակ ա-ի մեծ հաճախականության հետևանքով ա-ի քմայնացածությունը

6 Ի դեպ, պրոֆ. Գ. Զահուկյանը «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության
 ընդ նշում է, որ բարբառներում «քմայնացումը կարող է լինել ինչպես ներքին (ձայնիկների
 խլացումն ուղեկցող) պրոցես, այնպես էլ ենթաշերտային (սուբստրատային) կամ առերտա-
 յին (ադստրատային) ազդեցության արդյունք»: Սակայն սա իրեն բարբառային հատկանիշ արտա-
 քրում չի ստացել նրա առաջադրած 100 բարբառային հատկանիշների մեջ:

Խարբերողի բարբառի հնչյունախոսական մակարդակում էական, որակական հատկանիշ է, իսկ ան-ի սակավ գործածությունը Երգնկայի բարբառի նույն մակարդակում ան-ի քմայնացածությունը սահմանափակում է ածանցյալ, երկրորդական հատկանիշի շրջանակներում:

Ա-ի նվազ հաճախականությամբ Երգնկայի բարբառը մոտենում է Պուսի, Կարնո, Մշո, Սուշավայի, Ռոդոսթոյի, Ակնա և ան-ի քմայնացումից ազատ մյուս բարբառներին և հեռանում Խարբերողի, Արաբկիրի, Զեյթունի, Քեսաբի, Նիկոմեդիայի, Համշենի, Տիգրանակերտի, Վանի, Մալաթիայի, Ղարաբաղի, Մեղրու, Կարճևանի, Ագուլիսի բարբառներից:

Երկու բարբառները կարևոր տարբերություններ են երևան հանում ձայնավորների և երկբարբառների պատմական հնչյունափոխության մեջ:

2. Երգնկայի բարբառում միավանկ բառերում ո-ից առաջ ավելանում է շրթնային վ. իսկ Խարբերողի բարբառում պահպանվում է գրաբարյան հնչումը՝ օ. ոսպն > Երգ.՝ վօսպ, Խրբ.՝ օսպ, ողբ > Երգ.՝ վօխպ, Խրբ.՝ օխպ, որդն > Երգ.՝ վօրք, Խրբ.՝ օրք, որբ > Երգ.՝ վօրփ, Խրբ.՝ օրփ, ոխ > Երգ.՝ վօխ, Խրբ.՝ օխ, որս > Երգ.՝ վօրս, Խրբ.՝ օրս, ողջ > Երգ.՝ վօխջ, Խրբ.՝ օխջ, որձ > Երգ.՝ վօրց, Խրբ.՝ օրց:

Երկու բարբառները, որպես ընդհանրություն, միավանկ բառերի բառակզբի ո-ի դիմաց օ ունեն ուտն > օտն, որ (շաղկապ) > օր, և ո-ի դիմաց վօ ունեն ով > վօվ բառերում:

Միավանկ բառերում ո-ից առաջ շրթնային տարրի հավելումով Երգնկայի բարբառը ընդհանրություններ է հանդես բերում Կարնո, Վանի, Մուշի, Տիգրանակերտի, Հաղրովթի, Շամախի, Առտիալի և մի շարք այլ բարբառների հետ, իսկ Խարբերողի բարբառը ո-օ պահպանումով զուգաբանություններ է գծում Մալաթիայի, Կեսարիայի, Սասունի բարբառների հետ:

3. -այ երկբարբառին շեշտի տակ փակ վանկում և բառակզբում Երգնկայում՝ համապատասխանում է ետին շարքի ձայնավոր ա, իսկ Խարբերողի բարբառում առաջին շարքի ձայնավոր ան. այսօր > Երգ.՝ աւօր (կա նաև քօր). Խրբ.՝ անօր, գայլ > Երգ.՝ կալ, Խրբ.՝ կանլ, վայր > Երգ.՝ վաւր, Խրբ.՝ վանր, փայտ > Երգ.՝ փատ, Խրբ.՝ փանտ, ծայր > Երգ.՝ ծաւր, Խրբ.՝ ծանր և այլն:

Այստեղ երկու բարբառները ընդհանրություն են հանդես բերում այգի > էֆի, այրիկ > էրիկ բառերում, ուր ալ-ի դիմաց երկուսն էլ ունեն է՝ որպես շեղում օրինաչափությունից: Այս ընդհանրությունը տիպական է ոչ միայն հիշյալ բարբառների, այլև արևմտյան խմբակցության գրեթե բոլոր բարբառների համար:

Այ > ա հնչյունափոխությամբ Երգնկայի բարբառը շփման կետեր է հանդես բերում քմայնացումից ազատ բարբառների հետ, իսկ Խարբերողի բարբառը իր այ > ան հնչյունափոխությամբ մոտենում է քմայնացած ձայնավորներ ունեցող բարբառներին:

4. իւ-ը շեշտի տակ Երգնկայի բարբառում տալիս է ետնալեզվային, շրթնային ու, իսկ Խարբերողի բարբառում՝ առաջնալեզվային, ոչ շրթնային լ. արին > Երգ.՝ աւուն, Խրբ.՝ անին, ալիւր > Երգ.՝ ալոււր, Խրբ.՝ անլոււր, աղբիւր > Երգ.՝ ախպոււր, Խրբ.՝ ախպիւր, հարիւր > Երգ.՝ հաւոււր, Խրբ.՝ անարիւր, հիւսել > Երգ.՝ հուսէլ, Խրբ.՝ հիսէլ, հերին > Երգ.՝ հէւուն, Խրբ.՝ հէրին:

Միավանկ բառերում ևս Երզնկայի բարբառը պահպանում է իւ>ու օրինաչափությունը, իսկ հարբերդի բարբառում այս դեպքում իւ-ի դիմաց առկա է օ. ձիւն>Երզ.՝ ծուն, հրբ.՝ ծօն, սիւն>Երզ.՝ սուն, հրբ.՝ սօն, ձիւլ>Երզ.՝ ծուլ, հրբ.՝ ծօլ:

Իւ>ու հնչյունափոխությամբ Երզնկան զուգաբանություններ է դրսևորում Պոլսի, Եվդոկիայի, Սեբաստիայի, Տրապիզոնի, Համշենի, Կարնո, Թիֆլիսի, Ակնա և այլ բարբառների հետ, իսկ հարբերդի բարբառը իւ>ի հնչյունափոխությամբ՝ Մալաթիայի, Տիգրանակերտի, Արարատյան բարբառների հետ:

Ծ. Գրաբարյան ու-ին շեշտի տակ Երզնկայի բարբառում համապատասխանում է ու. իսկ հարբերդում՝ օ. քոյր>Երզ.՝ քուր, հրբ.՝ քօր, բոյն>Երզ.՝ պուն, հրբ.՝ պօն, ոշկոյզ>Երզ.՝ կուզ, հրբ.՝ կօզ (Երկու դեպքում էլ ող վանկի անկումով), բնկոյզ>Երզ.՝ ունզուզ, հրբ.՝ բնզօզ, թոյլ>Երզ.՝ քուլ, հրբ.՝ բօլ, լոյս>Երզ.՝ լուս, հրբ.՝ լօս, կապոյտ>Երզ.՝ կաբ-աւտ, հրբ.՝ կաբօտ, պատրոյզ>Երզ.՝ պառուլ, հրբ.՝ բալբօֆ և այլն:

Ու>ու անցմամբ զուգաբանությունների խիտ ցանց է գծվում Երզնկայի, Պոլսի, Տրապիզոնի, Համշենի, Տիգրանակերտի, Ռոդոսթոյի, Եվդոկիայի, Սեբաստիայի, Ակնա, Թիֆլիսի, Կարնո և բարբառների այլ մեծ խմբի միջև, իսկ ու>օ փոփոխությամբ զուգաբանությունների նվազ ցանց է գծվում հարբերդի, Մալաթիայի, մասամբ Վանի, Շառախի բարբառների միջև:

6. Երզնկայի և հարբերդի բարբառները կարևոր տարբերություններ են դրսևորում շեշտի հետ կապված հնչյունափոխության ժամանակ: հարբերդի բարբառում ընդհանրապես ձայնավորներն ավելի կայուն են, և շեշտազրկությունը հիմնականում չի ազդում նրանց որակի վրա:

Հայերենի համար այնպիսի թույլ ձայնավորներ, ինչպիսիք ու-ն և ի-ն են, զրկվելով շեշտից, Երզնկայի բարբառում ավելի հաճախ ընկնում են կամ հնչյունափոխվում ք-ի, մինչդեռ հարբերդի բարբառում դրանք հիմնականում մնում են անհնչյունափոխ: Այսպես, տուն-սեռ. Երզ.՝ տան, հրբ.՝ դունին, հոգն. Երզ.՝ տընէր, հրբ.՝ դունէր, մուկ-սեռ. Երզ.՝ մըգան, հրբ.՝ մուգին, միս-սեռ. Երզ.՝ մըսի, հրբ.՝ սիսի և այլն: Այլ կերպ ասած, հարբերդի բարբառին հատուկ չէ ձայնավորների սղման օրենքը, որով նա խիստ մոտենում է Պոլսի բարբառին: Իսկ Երզնկայի բարբառը այս տեսակետից գրավում է միջին դիրք, որովհետև վերջնավանկում ի. ու ունեցող բառերի թեքումը կատարվում է զուգահեռ ձևերով՝ և՛ հնչյունափոխված, և՛ անհնչյունափոխ հիմքերով. գինի-սեռականը հավասարապես լինում է և՛ կինիի, և՛ կինու, տուն-լինում է տան և տունին:

7. Երզնկայի բարբառի պայթական և կիսաշխական բաղաձայնների համակարգը հիմնված է շնչեղություն—ոչ շնչեղություն երկակի հակադրությամբ, իսկ հարբերդի բարբառի նույն բաղաձայնների համակարգը՝ ձայնեղություն—խլություն—չնչեղ խլություն եռյակ հակադրության վրա: Երզնկայի բարբառում բացառված է խլություն-ձայնեղություն հակադրությունը, որովհետև խուլերն ու ձայնեղներն այստեղ նույն շրջապատում երբեք հանդես չեն գալիս⁷: Բարբառում ձայնեղներից և խուլներից հնչույթային արժեքով են հանդես գալիս խուլերը, իսկ ձայնեղները հանդիսանում են խուլերի դիրքային տարբերակը

⁷ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս մեր հոդվածը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1972, № 5-ում:

միջձայնավորային դիրքում, ռնդայինների և այլ ձայնեղների մոտ: Մինչդեռ Խարբերդի բարբառում ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ պայթականների ու կիսաշփականների՝ բ, պ, վ, գ, կ, ֆ, դ, տ, ք, ձ, ծ, ց, զ, ն, չ-ի, համապատասխան շարքերը հանդես են գալիս նույն շրջապատում, հակադրվում են իրար և կատարում իմաստազատիչ դեր:

պանի՛ր (բանի՛ր, աշխատի՛ր) — բանի՛ր (պանի՛ր)
կալ (գալ բայը) — գալ (կալ՝ ցորենի) — ֆալ (խակ)
տասր (դասը) — դասը (տաս) — քասը (խասը)
տուլ՝ (դուք) — քուլ՝ (թուք)
ծօր (ծոր) — ձօր (ծոր տալ)
չաք (ճաթ, ճեղք) — չաք (ճամփաբաժան մասը)

Օրինակները հաստատում են պայթական ու կիսաշփական խուլների, ձայնեղների և շնչեղ խուլների՝ Խարբերդի բարբառում ինքնուրույն հնչույթներ լինելը:

Այսպիսով, պայթականներից ու կիսաշփականներից նրդնկայի բարբառում հնչույթային արժեքով են հանդես գալիս խուլերն ու շնչեղ խուլերը, այստեղ ձայնեղները հանդիսանում են խուլերի տարբերակը: Մինչդեռ Խարբերդի բարբառում ինքնուրույն, առանձին հնչույթներ են խուլ, ձայնեղ և շնչեղ խուլ պայթականներն ու կիսաշփականները:

8. Խարբերդի բարբառին բառասկզբում հատուկ է խուլ պայթականների ու կիսաշփականների ձայնեղություն. պ, տ, կ, ծ, փ > բ, դ, գ, ձ, չ. պատ > բատ, տարի > դարի, կատու > գադու, ծառ > ձառ, ճակատ > ջագատ: Այս նույն դիրքում նրդնկան խուլերը թողնում է նույնը. պատ, տարի, կադու, ծառ, ճագատ:

Նրդնկա բարբառներն էլ բառասկզբի ձայնեղ պայթականների ու կիսաշփականների դիմաց ունեն խուլ պայթականներ ու կիսաշփականներ, որով ստացվում է՝ նրդնկայի բարբառը երկաստիճան ձայնեղազուրկ բաղաձայնական համակարգ ունեցող բարբառ, Խարբերդի բարբառը՝ եռաստիճան, միջին հայերենի բաղաձայնական համակարգով բարբառ:

Պայթական բաղաձայնների համակարգով նրդնկայի բարբառը մոտենում է վանի, Շատախի, Մոկաց, Ղարաբաղի, Աստրախանի, Մարաղայի, Ուրմիայի, իսկ Խարբերդի բարբառը՝ Հաճընի, Բեյլանի, Զեյթունի, Քեսաբի, Սվեդիայի բարբառներին:

Մեր բարբառագիտական աշխատություններում Խարբերդ-նրդնկայի բարբառը ներկայացված է որպես եռաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգ ունեցող բարբառ (բ, բ, փ)⁸:

Մեր երկարատև ուսումնասիրության ընթացքում ո՛չ Խարբերդի, և ո՛չ էլ նրդնկայի բարբառներում ոչ մի դիրքում չենք նկատել շնչեղ ձայնեղի առ-

8 Տե՛ս 2. Ա ճ ա ո յ ա ն, Հայ բարբառագիտություն. Հայոց լեզվի պատմություն: Ա. Պ ա ռ ի Ր յ ա ն, Հայ բարբառագիտություն: Ա. Գ Ր Ի Պ Ր յ ա ն, Հայ բարբառագիտության դասընթաց: Ռ. Բ ա Ղ Ր ա մ յ ա ն, Դերսիմի բարբառային բարոնդը: Ա. Գրիգորյանի հիշյալ դասընթացի «Բաղաձայնական սխտեմը» բաժնում միջին հայերենի բաղաձայնական սխտեմ ունեցող բարբառների շարքում է դասված Խարբերդի բարբառը, սակայն այդուր Խարբերդի բարբառը հիշատակվում է իրրե եռաստիճան խլազուրկ համակարգով բարբառ: Ա. Ղարաբաղի 1941 թ. հրատարակած «Համառոտություն հայ բարբառագիտության» աշխատության «Շնչուկական դասակարգում» բաժնում Խարբերդի բարբառը դասակարգված է միջին հայերենի բաղաձայնական սխտեմի մեջ, բայց հետագա աշխատություններում, ցավոք, Խարբերդի բարբառը նորից տարվեց եռաստիճան խլազուրկ համակարգ ունեցող բարբառների շարքը:

կայություն: Ավելին. Երզնկայի բարբառը բառասկզբի դիրքում չունի նույն-իսկ ձայնեղություն, եթե նկատի ունենանք օրինաչափությունը և ոչ բացառությունները, որոնք այլ բարբառների կամ լեզուների ազդեցության հետև-վանք են:

Բարբառագիտության մեջ շնչեղ ձայնեղի առկայությունը բնորոշված է գրաբարի ձայնեղների դիմաց: Խարբերդի բարբառում գրաբարյան ձայնեղ-ները խլացել են, խուլների դիմաց է, որ բարբառն ունի ձայնեղներ, իսկ խուլից ձայնեղի, առաջ շնչեղ ձայնեղի առաջացում հայ բարբառագիտության պատ-մության մեջ չի հավաստված և բարբառագետների կողմից չի բնորոշված, հետևաբար բացառվում է շնչեղ ձայնեղի դոյությունը նաև Խարբերդի բար-բառում:

9. Երզնկայի բարբառում ու-ն և ր-ն հնչյունախոսական մակարդակում միմյանցից հստակորեն տարբերակվում են, հնչույթային մակարդակում իրարից անկախ հնչույթներ են, որը երևում է հետևյալ նվազագույն զույգերի հակադրությունից.

ոռո (ուռեցք)—ուր (ուռ, ընտանի կենդանիների ստինք)

սառ (սանր)—սաւ (սար)

ծառ (ծառ և ծանր)—ծաւ (ծայր)

առուն (առու+ն)—աւուն (արյուն)

Խարբերդի բարբառի ձայնորդ հնչույթների համակարգում պակասում է ո հնչույթը. բարբառում այն վերածվել է ր-ի: Այս պատճառով առաջացած հա-մանունների (օրինակ արու՝ և՛ առու, և՛ արու) իմաստային տարբերակումը երևում է միայն կոնտեքստում: Խարբերդի բարբառում ո է հնչվում հիմնա-կանում բնաձայն բառերում. այս դեպքում էլ չկան ո-ի և ր-ի հակադրու-թյուններ, ուստի և ո-ն Խարբերդի ձայնորդների համակարգում հնչույթ չէ:

Ռ>Բ փոփոխությամբ Խարբերդի բարբառը զուգաբանություններ է հան-դես բերում Մալաթիայի, Սուչավայի, Թիֆլիսի բարբառների հետ և խստիվ հեռանում Երզնկա, Պոլիս, Տրապիզոն, Կարին, Մուշ բարբառախմբերից:

10. Խարբերդի բարբառում և կա միայն բառասկզբի դիրքում, մնացած դիրքերում և-ն կամ ընկնում է, կամ նրա դիմաց առկա է յ: Երզնկայի բար-բառը և ունի բոլոր դիրքերում, բացի ր-ից հետո եկող դիրքը. և չկա նաև այն բարդ բառերի երկրորդ եզրում, ուր վերջինս չի կապված որևէ ձայնակապով: Այսպես, հազ>Երզ., Խրբ.՝ հազ, հաց>Երզ., Խրբ.՝ հաց, հեղեղ>Երզ., Խրբ.՝ հեղեղ, բայց՝ պահել>Երզ.՝ պահել, Խրբ.՝ բիլել, սահել>Երզ.՝ սահել, Խրբ.՝ սայիլ, սահման>Երզ.՝ սահման, Խրբ.՝ սայման, խոտհունձ>Երզ., Խրբ.՝ խօղունց, աշխարհ>Երզ., Խրբ.՝ աշխար, ազահ>Երզ.՝ տկկահ, Խրբ.՝ ալկա, շահ, մահ, բահ>Երզ.՝ շահ, մահ, պահ, Խրբ.՝ շայ, մայ, պայ և այլն:

Հ>Յ փոփոխությամբ Խարբերդի բարբառը շփման մեջ է մտնում Մշո, Մալաթիայի, Ակնա բարբառների հետ, իսկ ընդհանրապես և հնչյունի սակավ դործառությամբ Վանի, Մշո բարբառների հետ միասին յուրահատուկ տեղ է գրավում հայ բարբառների մեջ:

11. Նր հնչյունակապակցության դիմաց Երզնկայի բարբառը ունի ո, իսկ Խարբերդի բարբառը՝ յր. սանր>Երզ.՝ սառ, Խրբ.՝ սայր, մանր>Երզ.՝ մառ. Խրբ.՝ մայր, ծանր>Երզ.՝ ծառ, Խրբ.՝ ձայր, մանրութ>Երզ.՝ մառութ, Խրբ.՝ մայրութ:

12. Տր հնչյունախմբին (ինչպես նաև բարբառի դր-ին) Երզնկայի բարբառում համապատասխանում է ո, իսկ Խարբերողի բարբառում՝ յր. կոտրել > Երզ.՝ կոռել, հրբ.՝ գոյրել, կտրել > Երզ.՝ կրոել, հրբ.՝ զրյրել, բնտրել > Երզ.՝ հրոել, հրբ.՝ հրյրել, կտրիձ > Երզ.՝ կրոին, հրբ.՝ գրյրին, Պետրոս > Երզ.՝ Պլոս, հրբ.՝ Բէյրոս և այլն:

Հիշյալ երկու կետերում Երզնկայի բարբառը ընդհանրություն է Երևան հանում Եվդոկիայի, Շապին-Գարահիսարի, մասամբ Կարնո, իսկ Խարբերող՝ Ակնա և Ասլանբեկի բարբառների հետ:

13. Յ-ն (ինչպես նաև բարբառի վ-ն) ն-ից առաջ Խարբերողի բարբառում ենթարկվել է առնմանական փոփոխության (տն > նն), իսկ Երզնկայի բարբառում նման փոփոխություն տեղի չի ունեցել. մտ(ա)նել > Երզ.՝ մրդնալ, հրբ.՝ մրննիլ, գիտ(ե)նալ > Երզ.՝ կիդնալ, հրբ.՝ կիննալ, մատնոց > Երզ.՝ մադնոց, հրբ.՝ մաննոց, հայտնել > Երզ.՝ հայդնել, հրբ.՝ հայննել:

Առնմանական այս փոփոխությամբ Խարբերողի բարբառը հարում է Ակնա, Տիգրանակերտի, Երևանի, Ղարաբաղի բարբառներին:

14. Բառասկզբի սալ, ստ կապակցությունների ա-ն Խարբերողի բարբառում ընկել է, և սլ, տ-ն, որպես բառասկզբի հնչյուններ, ըստ բարբառի օրինաչափության, դարձել են բ, դ: Երզնկայի բարբառում նույն հնչյունախմբերը, մնալով անփոփոխ, սկզբից ավելացնում են նաև ը. սպանել > Երզ.՝ ըսպաննել, հրբ.՝ բաննել, սպիտակ > Երզ.՝ ըսպիդակ, հրբ.՝ բիդակ, ստեղծել > Երզ.՝ ըստեղծել, հրբ.՝ դէղծել, ստերջ > Երզ.՝ ըստէրջ, հրբ.՝ դէրջ, Ստեփան > Երզ.՝ ըստէփան, հրբ.՝ Բէփան:

Երզնկայի բարբառի համար այս օրենքի միակ բացառությունը ստեպդին բառն է, որը ա-ի անկումով դարձել է ստեպդին > դէդրին > դէդրինդ⁹: Այս բառը, սակայն, փոխառություն է հարևան բարբառներից (թերևս հենց Խարբերողի բարբառից), որը երևում է նաև բառասկզբի բ-ից, հակառակ բարբառի օրինաչափության:

Սա > ստ հնչյունակապակցությունների ա-ի անկումով Խարբերողի բարբառը ընդհանրություն է դրսևորում Մալաթիայի բարբառի հետ:

Արդ, տեսնենք այն տարբերությունները, որ դրսևորում են Երզնկայի և Խարբերողի բարբառները ձևաբանական համակարգերում, որն էլ ավելի կարևոր է ամեն մի լեզվական համակարգի կառուցվածքը բացահայտելիս:

15. -ստան հոգնակերտ ձևույթը Խարբերողի բարբառում գրվում է ի-ով՝ վերջավորվող մի շարք բաղմավանկ բառերի վրա և ցույց է տալիս բուն հոգնակիություն, սակավ դեպքերում միայն՝ հավաքականություն, տեղ, վայր՝ էֆէստան (այգիներ և այգիների վայր), հոֆէստան (հոգիներ), հօրէստան (հորիներ), ուրէստան (ուռիներ): Երզնկայի բարբառում -ստան ձևույթն են ստանում այգի, գինի, ծառ բառերը՝ էֆէստան, կինէստան, ծառաստան, բռլորն էլ վայր, տեղ նշանակությամբ¹⁰:

16. -նր հոգնակերտ ձևույթն ստանալուն զուգահեռ Խարբերողի բարբառում մարմնի զույգ անդամ ցույց տվող բառերը ստանում են նաև -վի երկա-

⁹ Ժողովուրդն այս բառն ստուգաբանում է տեղը պինդ, ամուր, իբրև հողում պինդ գտնվող. և իր ստուգաբանությունը արդարացնելու համար է, հավանաբար, բառավերջում ավելացրել դ:

¹⁰ Հիշյալ բոլոր բառերը թե՛ Խարբերողի, և թե՛ Երզնկայի բարբառում որպես բուն հոգնակի ստանում են նև ձևույթ:

կի թիվն արտահայտող ձևույթը՝ օղվի (ոտքեր), ծաւլի (ձեռքեր), ձունգվի (ծնկներ), աշվի (աչքեր), ունֆվի (հոնքեր), անգրջվի (ականջներ)։ Այստեղ կանունիսկ ալեւանվի (բերաններ)՝ մարմնի անդամ մյուս բառերի համաբանությամբ։ Երզնկայի բարբառում հիշյալ տիպի բառերը չեն ստանում մաքուր -վի ձևույթ, այլ՝ -վի-ով բարդված -վրնի, որն էլ իր մեջ անսլայման պարունակում է ստացականության իմաստ. ծընվընիւն վօշինչ չի գա (ներանց ձեռքերին ոչինչ չկա)։

17. Եթե Երզնկայի բարբառն ունի հոլովման տարբեր տիպեր (ի, ու, ա, ան, ւա, օշ, օ, ց), որոնք դալիս են հոլովման հին համակարգից՝ հնչյունափոխական կամ համաբանական կազմություններով, ապա հարբերդի բարբառը հիմնականում միասնականացրել է դրանք՝ բերելով մի հոլովման տակ (ի). քիչ թվով բառեր միայն ստանում են ի-ից տարբեր այլ հոլովիչներ։ Այսպես.

բառեր	Սևոական-տրական հոլով	
	Երզնկա	հարբերդ
ոսկի	օսկու (օսկիին)	օսկիին
գինի	կինու (կինիին)	կինիին
շուն	շան (շունին)	շունին
տուն	տան (տունին)	դունին
բևռ	պ՜էռան	պւ՜ռին
լևռ	լ՜էռան	լարին
ծառ	ծառան	ծարին
տեր	տիրօշ	դիրուն
ընկեր	ընգէրօշ	ընգէրին

18. Ձայնավորով վերջացող միավանկ բառերը հարբերդի բարբառում ստանում են կրկնակի հոդառություն. ծինը զարէցի՞ր (Ձին կապեցի՞ր)։ Թինը դուր ընձի (Թին տուր ինձ)։ Նման Լրևույթ Երզնկայի բարբառում գոյություն չունի։

19. Երզնկայի բարբառին բնորոշ են -(ի)կ-ով [իկ, իգ, կ, գ] գերանվանական կազմությունները՝ ասիգա, աղիգա, անիգա, ասանգ, աղանգ, անանգ, ֆուգիւ, որպիսիք իսպառ բացակայում են հարբերդի բարբառում. այստեղ հիշյալ գերանուններն ունեն անի, ադի, անի, սաբէս, դաբէս, նաբէս, ֆաւլուն ձևերը։

*20. Ստացական գերանունները Երզնկայի բարբառում ստանում են ի հոլովանիշը, հարբերդի բարբառում՝ ու. իմ, քո, մեր, ձեր > Երզ.՝ իմին, քուգին, մէրին. ծլւրին, հրբ.՝ իմուն, ֆուվուն, մլւրուն, ծլւրուն։

Երզնկայի և հարբերդի բարբառները կարևոր տարբերություններ են երևան հանում նաև խոնարհման համակարգում։

*21. Երզնկայի բարբառը, բարբառների մեծագույն մասի նման, օժանդակ բաշի ներկա ժամանակի հոգնակի թվի առաջին դեմքում գրաբարի մ-ի դիմաց ունի ն, իսկ անկատար ժամանակում առկա է հավելյալ ն. Լմք, էաք > ինֆ, էանֆ։ Մինչդեռ հարբերդի բարբառը, փոքր թվով բարբառների հետ,

ավելի հարազատ է դրարարին. այստեղ անկատարի կազմության համաբանությանմբ դուրս է մղվել նաև ներկայի մ–ն. եմք, էաք>իբ, էաբ: Այս վերջավորությունները պահպանվում են խոնարհման բոլոր տիպերում, բոլոր եղանակների բոլոր ժամանակաձևերում՝ ստեղծելով նկատելի տարբերություն երկու բարբառների խոնարհման հարացույցներում: Բացի այդ, Երզնկայի բարբառում կատարյալ ավարտին է հասել ռնգայիններից առաջ և լծորդի ի–ի վերածվելու պրոցեսը, իսկ Խարբերդի բարբառում հոգնակի երրորդ դեմքում ե–ն մնացել է անփոփոխ. եմ, եմք, են>Երզ.՝ իմ, ինբ, ին, Խրբ.՝ իմ, իբ, էն:

*22. Երզնկայի բարբառում «ե» և «ի» խոնարհման բայերի հրամայականը եզակի թվում ունի միևնույն է՝ վերջավորությունը, իսկ Խարբերդի բարբառում «ե» խոնարհման բայերն ունեն ան, «ի» խոնարհման բայերը՝ ի՛ր վերջավորություն:

Երզնկա

Խարբերդ

«ե» խոն.—իւմէ՝ (խմի՛ր)

իւման–(խմի՛ր)

«ի» խոն.—նստէ՝ (նստի՛ր)

նստիր (նստի՛ր)

23. Երզնկայի բարբառում հարկադրական եղանակը կազմվում է պիտի եղանակիչով կամ նրա առաջին բաղադրիչով՝ պի. պ–ով, իսկ Խարբերդի բարբառում նույն եղանակիչի երկրորդ բաղադրիչով՝ դի, դբ, դ–ով:

Երզ.՝ պիդի խըմիմ, պէթամ (պիտի խմեմ, պիտի երթամ)

Խրբ.՝ դը խըմիմ դէրթամ (պիտի խմեմ, երթամ):

24. Հարկադրական եղանակի ժխտական ձևերում Երզնկայի բարբառում ժխտականի մասնիկը դրվում է եղանակիչից հետո, իսկ Խարբերդի բարբառում՝ եղանակիչից առաջ. Երզ.՝ պի չի նրստիմ, Խրբ.՝ չի դի նըստիմ:

*25. Տալ, գալ, լալ միավանկ բայերի խոնարհման ժամանակ Խարբերդի բարբառում հարկադրական եղանակում դբ, դի եղանակիչները դառնում են դու՝ նույն բայերի ներկա ժամանակում հանդես եկող գու–ի համաբանությանմբ. դու գամ, դու դամ, դու լամ (պիտի գամ, տամ, լամ): Նման երևույթ Երզնկայի բարբառում գոյություն չունի:

26. Խարբերդի բարբառի ենթաբարբառներում (Չմշկածագ, Չարսանճագ և այլն) կան ներկայի և անկատարի շարունակականի ձևեր նր մասնիկով. Երզնկայի բարբառի ոչ մի հատվածում չկան շարունակականի ձևեր:

Քերականական համակարգով Երզնկայի բարբառը ավելի շատ մոտ է Պոլսի, Կարնո, Շասլին–Գարահիսարի, իսկ Խարբերդը՝ իր հարևան Արաբկիրի, Մալաթիայի, Ակնա բարբառներին:

Երզնկայի և Խարբերդի բարբառները դրսևորում են հնչյունական ու քերականական մի խումբ այլ մասնակի տարբերություններ, որոնց վրա էանդ չենք առնում:

Քննվող երկու բարբառները նկատելի տարբերություններ են դրսևորում նաև բառային մակարդակում: Ոչ սակավ դեպքերում միևնույն բառիմաստի դիմաց նրանք ունեն տարբեր բառաձևեր: Վերը հիշատակած 100 բառանոց ցուցակում Խարբերդի և Երզնկայի բարբառները երևան են հանում հետևյալ տարբերությունները.

	Երզնկա	Խարբերդ
1. մոխոր	փօշի, մօխիր	մախիր
2. կեղեւ	կըջեք, քըլէֆ	փուր, դէղէվ
3. թռչուն	թըռչուն, դուշ	թրռչուն, ջընջուղ
4. փետուր	պըմբուլ, թէբուր	թյու, փէդուր
5. պարանոց	ձիտ	շըլլի
6. ագի	պօշ, աքի	բօշ
7. եղջիր	կօդօշ	բուչնուզ, դօդօշ
8. սերմն	հունդ, սէրմ	թօխում, ունդ
9. մորթ, մաշկ, կաշի	կաշի	մօրթ, գաշի
10. դեր	խըլավ, քէր	թավու

Եթե շարունակենք բառային տարբերությունների թվարկումը, նկատի ունենալով բառային հիմնական ֆոնդն ընդգրկող առօրյա գործածական այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ նայել > Երզ.՝ նաիլ, Խրբ.՝ հաիլ, հանգստանալ > Երզ.՝ հանքստանալ, Խրբ.՝ հաֆշիլ, հոգնել > Երզ.՝ օկնիլ, Խրբ.՝ խօնջանալ, տանիք > Երզ.՝ էրքիք, Խրբ.՝ դէնէր, պապ > Երզ.՝ պապ, պաբուկ, Խրբ.՝ պաղա, ալիար, ծիրան > Երզ.՝ պարգուկ, Խրբ.՝ մըշմիշ, շեմ > Երզ.՝ սէմ, շէմ, Խրբ.՝ էշիգ, գողաց > Երզ.՝ շանա, Խրբ.՝ բուշ, ինչո՞ւ > Երզ.՝ ինչո՞ւ, ի՞նչ, Խրբ.՝ օրի՞, ի՞նչ, դադադ > Երզ.՝ նախիլ, Խրբ.՝ գարաղ և այլն, և այլն, ապա այդ տարբերությունների թիվը հասնում է պատկառելի քանակի:

Այսպիսով, ինչպես երևում է Խարբերդի և Երզնկայի բարբառների համեմատական քննությունից, հիշյալ բարբառները հնչյունաբանական, ձևաբանական և բառային մակարդակներում երևան են հանում էական, բարբառային սահմաններ գծող տարբերություններ: Այս բարբառների ընդհանրություններն այնքան են, որքան որ միմյանց հետ ունեն արևմտյան խմբակցության բարբառներն ընդհանրապես: Երզնկայի բարբառն իր ամբողջ համակարգով ավելի շատ մոտ է Պոլսի բարբառին: Ավելի ակնառու է Խարբերդի բարբառի ընդհանրությունը Մալաթիայի, Արարկիրի, Ակնա, Կիլիկիայի և Անտիոքի շրջանի բարբառների հետ:

Ելնելով վերևում շարադրված փաստական տվյալներից, մենք կարծում ենք, որ Երզնկայի և Խարբերդի խոսվածքները պետք է համարել առանձին, ինքնուրույն բարբառներ:

ВЗАИМООТНОШЕНИЕ ДИАЛЕКТОВ ХАРБЕРДА И ЕРЗИНКА

Д. М. КОСТАНДЯН

(Р е з ю м е)

В диалектологической литературе говоры Харберда и Ерзинка рассмотрены как единый диалект, названный диалектом Харберда-Ерзинка. Однако анализ фактического материала показывает, что имеются существенные различия в фонологической, морфологической и лексической системах этих говоров, которые разделяют их и дают нам право говорить о наличии диалектов Харберда и Ерзинка как самостоятельных, отдельных диалектных единицах.